

Սոֆյա Ն. Օհանյան
Փիլիսոփ. գիյր. թեկնածու

ԵՐՎԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՄՈՆԻԶՄԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔԱՏՈՒՄ

Ծննդյան 140-ամյակի և մահվան 90-րդ տարելիցի առթիվ*

Բանալի բառեր – հայ փիլիսոփայության պատմություն, պոզիտիվիզմ, համադրական մոնիզմ, գաղափարների փոխադարձ լրացման սկզբունք, պատմական ռեալիզմ:

Հայոց պատմության մեջ XX դարասկիզբը բարդ ժամանակաշրջան էր և՛ քաղաքական, և՛ մշակութային առումով: Այդ շրջանում հայ ժողովուրդն ապրել է համաշխարհային պատերազմի ու հեղափոխության, ցեղասպանության ու տեղահանության սարսափները, պետականության վերակերտման ուրախությունը, ենթարկվել է խորհրդային վարչակարգին, որն էլ որոշել է հետագա տասնամյակների հայ մշակույթի զարգացման միակողմանիությունը:

XX դարասկզբի հայ փիլիսոփայական միտքը հարուստ ու բազմազան էր, քանզի ժամանակի գաղափարական ընդհանուր մթնոլորտի, փիլիսոփայական հիմնախնդիրների առաջադրման և քննարկման գործում նշանակալի դեր են խաղացել Ավետիս Ահարոնյանը (1866–1948), Միքայել Վարանդյանը (1870–1934), Երվանդ Ֆրանգյանը (1878–1928), Դավիթ Անանունը (1879–1943), Բախշի Իշխանյանը (1879–1921), Վահան Խորենին (1885–1920), Գարեգին Նժդեհը (1886–1955), Հայկ Ասատրյանը (1900–1956) և ուրիշներ: Նրանք, համաշխարհային փիլիսոփայության բազմազան ուղղությունների գաղափարական զինանոցը ծառայեցնելով ազգային շահերի և նպատակների տեսական հիմնավորմանը¹, փորձել են իմաստավորել հայ ժողովրդի ազգային կեցությունը, բացահայտել հայ մարդու նկարագիրը, նախանշել հայ ազգի զարգացման հեռանկարները:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը հայոց պետականության ձևավոր-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 19.09.2018

1 Տե՛ս **Օհանյան Ա.**, Փիլիսոփայական-մարդաբանական հարցերը XX դարասկզբի հայ փիլիսոփայության մեջ, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., 2007, N 2, էջ 175–187:

ման քաղաքական նախադրյալների կուտակման ժամանակահատվածն էր: Տվյալ դարաշրջանին բնորոշ՝ սեփական հայրենիքում ինքնորոշվելու քաղաքական նպատակի հիմնական կրողները հայ ազգային կուսակցություններն էին²:

Այդ առաջադրանքի հիմնավորման առումով ուշագրավ էր ժամանակի ականավոր մտավորական, Երվանդ Ֆրանգյանի խորհմաստ դիտարկումն այն մասին, որ հարցերի տեսական լուսաբանումն ու հիմնավորումը նույնքան արժեքավոր և կարևոր են, որքան գործնական կողմը³: Ե. Ֆրանգյանը ցանկացած քաղաքական կուսակցության համար ընդհանուր փիլիսոփայական աշխարհայեցողության հիմնավորումն այնքան էր կարևորում, որքան հստակ գաղափարախոսության մշակումը. «Հասարակական կեանքում **հաստատուն, անշեղ ու որոշակի** են ընդհանրապէս այն հոսանքի քայլերը, որի փիլիսոփայական աշխարհայեացքը, **հասարակա-քաղաքական կօնցեպցիան որոշ, պարզ և բիւրեղացած է: Անորոշ, տարտամ և երերուն են, ընդհակառակը, այն հոսանքի քայլերը, որի հասարակական-քաղաքական ըմբռնողութիւնը երերուն, անորոշ և բիւրեղացած չէ**»⁴:

Թեև փիլիսոփայությունը միշտ ունեցել է իր առաջնակարգ տեղը երևույթների ու իրերի լուսաբանության մեջ, սակայն հատկապես XX դարում, որը Ե. Ֆրանգյանի կարծիքով՝ «գերազանցապէս փիլիսոփայութեան դար է»⁵, ոչ միայն անհատները, այլև քաղաքական կուսակցություններն էին աշխատում հիմնավորել իրենց փիլիսոփայական աշխարհայացքը: Ուստի Ե. Ֆրանգյանը գտնում էր, որ հարկ է «Մշակել այսպիսի մի փիլիսոփայական աշխարհայեացք – ահա գերագույն խնդիրը ամեն մի մտածողի, ամեն մի դպրոցի և հասարակա-քաղաքական կուսակցութեան: Մի դպրոցի, մի կուսակցութեան մասնակի տեսակէտները և սկզբունքները մի գեղեցիկ ներդաշնակութեամբ և տրամաբանական համաձայնութեամբ ձուլւած են այդ համայնապարփակ կօնցեպցիայի մէջ: Ամեն երևոյթ և շարժում, անգամ ամեն մի հասարակ դէպք բացատրելիս և գնահատելիս՝ մենք ելնում և առաջնորդւում ենք այդ համայնապարփակ աշխարհայեցողութիւնից: Նա մեր ղեկավարող սկզբունքն է ամեն քայլափոխում»⁶: Իսկ քանի որ 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի՝ իր ազատության և անկախ պետականության վերականգնման համար մղած պայքարը պետական կեցության փոխակերպելու գործում առանցքային դեր խաղացած կազմակերպությունը ՀՅԴ-ն էր, Ե. Ֆրանգյանն իր նպատակն էր համարում հենց ՀՅԴ արժեհամակարգի և գաղափարախոսության տեսական-փիլիսոփայության հիմնավորումը:

Թեև ՀՅ Դաշնակցության գործունեության և ռազմավարության հայեցակարգային սկզբունքներին վերաբերող աշխատությունները, պատմագիտական գրականությունը, փաստագրական նյութը բազմազան են, սակայն խիստ սակավ են կուսակցության փիլիսոփայական հիմքերի տեսա-

2 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Խուդինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 6-7:

3 Տե՛ս **Օհանյան Ս.**, Երվանդ Ֆրանգյանը փիլիսոփայության էության և նշանակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2008, N 2, էջ 12-20:

4 **Ֆրանգյան Ե.**, Փիլիսոփայական նամակներ, «Գործ» օրաթերթ, Բաքու, 1908, N 19, էջ 3:

5 **Ֆրանգյան Ե.**, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը. Իրապաշտ փիլիսոփայութիւն. Հ.Յ.Դաշնակցութեան փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնաւորման փորձ, Փարիզ, 1929, էջ 11:

6 **Ֆրանգյան Ե.**, Փիլիսոփայական նամակներ, N 19, էջ 3:

կան լուսաբանմանը նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները: Ե. Ֆրանգյանի կենսագրության⁷ վերաբերյալ պահպանված հիշատակությունները և տարբեր անսագրերում նրա հեղինակած հոդվածները ցույց են տալիս, որ դեռևս ուսանողական տարիներից նա իր և իր սերնդակիցների առաքելությունն էր համարում ՀՅ Դաշնակցության աշխարհայեցողության վերլուծությունը, հասարակական-քաղաքական դավանանքի և հայ ազգային կեցության մեջ այս կուսակցության ունեցած դերակատարության ուսումնասիրությունը:

Ե. Ֆրանգյանի փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա ազդեցություն են գործել Սոկրատեսը, Պլատոնը, Ֆիխտեն, Տոլստոյը, Միխայլովսկին, Շոպենհաուերը, Նիցշեն, Կոնտը և այլք: Սակայն նրա՝ որպես մտածողի գաղափարական կայացման գործում էական ներդրում ունեն հատկապես «երկրորդ պոզիտիվիզմ»-ի հիմնադիրներ Է. Մախը և Ռ. Ավենարիուսը: Հետևելով Մախին և Ավենարիուսին՝ Ե. Ֆրանգյանն իր փիլիսոփայությունն անվանում է համադրական մոնիզմ կամ քննադատական-իրապատ փիլիսոփայություն⁸: Նա, ընդհանրացնելով փիլիսոփայական բոլոր ուղղությունները, առանձնացնում է մտածողության երկու՝ իրար լրիվ հակադիր տեսակներ՝ մոնիստական և դուալիստական, որոնք գոյություն են ունեցել մեկտեղ ու միաժամանակ: Բայց որքան մարդկային միտքը նորանոր նվաճումներ է ունենում, որքան նորանոր գիտական մեթոդներ են

7 Երվանդ Ֆրանգյանը ծնվել է 1878 թ. փետրվարի 3-ին Մուրմալուի Իգդիր գյուղաքաղաքում՝ աղքատ երկրագործի ընտանիքում: Գյուղի ծխական դպրոցն ու Երևանի թեմական դպրոցն ավարտելուց հետո նա մի քանի տարի պաշտոնավարում է Թավրիզի թեմական և Սալմաստի հայկական դպրոցներում միաժամանակ մասնակցելով հասարակական-քաղաքական կյանքին և ՀՅ Դաշնակցության կազմակերպական-քարոզչական աշխատանքներին, ուսումնասիրելով Ատրպատականի պատմական անցյալը, նրա տնտեսական դրությունը, ազգագրական կյանքը: Հավաքված նյութերը կազմում են «Ատրպատական» երկը (Թիֆլիս, 1905 թ.):

Դասավանդման ընթացքում հավաքած համեստ գումարի, «Ատրպատական»-ի վաճառքից ստացված հասույթի և մի բարերարի աջակցության շնորհիվ նա 1905 թ. մեկնում է Գերմանիա, ընդունվում Բեռլինի համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետը: Ուսումնառությունը կիսատ թողնելով՝ 1909 թ. վերադառնում է Անդրկովկաս, աշխատանքի անցնում Երևանի թեմական դպրոցում, որտեղ երեք տարի պաշտոնավարելուց հետո՝ 1912 թ., վերադառնում է Բեռլին՝ շարունակելու համալսարանական կրթությունը և ավարտում «փիլիսոփայության դոկտոր» տիտղոսով: 1913 թ. Թիֆլիսում տպագրում է «Հունական փիլիսոփայություն» ստեղծագործությունը և հեռանում Բեռլին, ուր մնում է մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Այնուհետև գնում է Բաքու, որտեղ հրավիրվում է որպես հոգեբանության և պատմության ուսուցիչ իգական գիմնազիայում:

1915 թ. գարնանը՝ Վասպուրկանի գրավումից հետո, գնում է Վան, ուր կատարում էր մի շարք հասարակական աշխատանքներ: Նահանջից հետո նորից գնում է Բաքու և ստանձնում հայկական արական ու իգական դպրոցների տեսուչի պաշտոնը: 1917 թ. հրատարակում է «Քրիստափոր Միքայելյան» և «Հասարակագիտական էություններ» ուսումնասիրությունները: 1918 թ. հրավիրվում է Թեհրանի հայոց դպրոցի տեսուչի պաշտոնին, որը և վարում է մեկ տարի: 1919 թ. աշնանը գալիս է Հայաստան և ստանձնում Երևանի Ալեքսանդրյան գիմնազիայի տեսուչի պաշտոնը: Դրանից բացի՝ նրան հանձնվում է նաև կառավարության բացած տարրական և բարձրագույն դասընթացների ղեկավարությունը, իսկ 1920 թ. աշնանից հրավիրվում է Հայաստանի համալսարանի ղոցենտի պաշտոնին: Զուգահեռաբար մասնակցում էր Հանրային կրթության նախարարության գանազան հանձնաժողովների, քաղաքային ինքնավարության խորհրդի աշխատանքներին, աշխատակցում էր հայ մամուլին, գործու ներ կատարում կրթական-դաստիարակչական միջոցառումներում:

Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. ղեկտեմբերին, Ֆրանգյանը հեռացվում է զբաղեցրած պաշտոններից և կրում այն բոլոր դատությունները, որոնք բաժին են ընկնում Հայաստանում մնացած մտավորականությանը: Փետրվարյան հեղաշրջումից հետո նա դառնում է իր կազմակերպած Մուրմալուի Փրկության կոմիտեի նախագահը և մասնակցում ձակափ պաշտպանության գործին: Ապրիլյան նահանջից հետո գնում է Պարսկաստան և 1920 թ. սեպտեմբերից ստանձնում Ղազվինի հայկական դպրոցի տեսուչի պաշտոնը: Երկու տարի անց նույն գործով հրավիրվում է Մուլթանապատ: 1926 թ. սեպտեմբերից սկսած՝ վարում է Համադանի հայկական ազգային դպրոցի տեսուչի պաշտոնը: Մահացել է Համադանում 1928 թ. մարտի 15-ին: Մահից հետո տպագրվել է նրա «Մեր փիլիսոփայական աշխարհայացքը. Իրապատ փիլիսոփայություն. ՀՅ Դաշնակցութեան փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնադրման փորձ» ծրագրային աշխատությունը:

8 Տե՛ս **Օհանյան Ս.**, XX դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն (Երվանդ Ֆրանգյան, Դավիթ Անանյան), թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2008:

երևան գալիս, այնքան ավելի ու ավելի տիրապետող է դառնում մոնիստական մտածելակերպը: Ե. Ֆրանգյանն առանձնացնում է մոնիզմի պատմական երեք դրսևորում՝ միմյանց լրիվ հակադիր մատերիալիզմն ու իդեալիզմը և դրանց միակողմանիություններից զերծ համադրական մոնիզմը: Համադրական մոնիզմի փիլիսոփայության հիմքում ընկած է գաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը: **Առաջին հերթին** դա վերաբերում է սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությանը: Առանց սուբյեկտի՝ չկա օբյեկտ, և առանց օբյեկտի՝ չկա սուբյեկտ: Դրանցից որևէ մեկի առաջնայնության հարցն անիմաստ է, որովհետև գոյություն ունեն միաժամանակ, ընդ որում, յուրաքանչյուրն իմաստ ու արժեք է ստանում փոխադարձ հարաբերությամբ. «Ենթական (սուբյեկտ) և առարկան (օբյեկտ) համարժեք են իբրև փորձի հալասար և համազօր անդամներ: Այն հարցը, թե դրանցից որն է առաջնական և որն է որից ծագում, – զուտ բնագանցական հարց է: Նրանք միաժամանակ տրած են...իմաստ և արժեք են ստանում միայն այդ փոխադարձ յարաբերությամբ»⁹: **Երկրորդ**, հոգեբանության մեջ միմյանց լրացնում են մարդկային հոգու երեք հիմնական տարրերը՝ մտածողությունը, կամքը և զգացմունքը, քանզի «...կամքի, զգացումի և ինացականութեան կամ մտքի բիրեղացած պրօցէսներ տեղի չեն ունենում»¹⁰: Մարդու այդ կարողությունները գործում են միասնական և միաժամանակ, թեև տարբեր պահերի դրանցից մեկը կարող է գերակայություն ունենալ մյուսների նկատմամբ: **Երրորդ**, սոցիալական փիլիսոփայության և պատմության փիլիսոփայության մեջ համադրական մոնիզմը դրսևորվում է որպես պատմական ռեալիզմի տեսություն, ըստ որի՝ պատմական գործընթացը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ իրատեսորեն գնահատելով այդ գործընթացին մասնակցող յուրաքանչյուր տարրի և ուժի տեղն ու դերը:

Պատմափիլիսոփայական գրականության մեջ սոցիալ-պատմական զարգացման առաջնիչ գործոններ ու գլխավոր ազդակներ են համարվել կրոնական զգացումը, տնտեսական շահը, ռասայական պատկանելությունը, ազգամիջյան բախումները, աշխարհագրական դիրքն ու պայմանները, ժողովրդի հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, միտքն ու բանականությունը և այլն: Մակայն պատմական ռեալիզմի տեսանկյունից նման մոտեցումները գնահատվում են որպես միակողմանիություններ, որոնց օգնությամբ անհնար է բացատրել հասարակական-պատմական ընթացքի և զարգացման բարդ օրինաչափությունները. «Պատմական պրօցէսի տարրերից մեկը չի ներկայանում իբր պատճառ, միսը՝ հետևանք, մեկը՝ առաջնական, միսը՝ երկրորդական, մեկը՝ ակտիվ, միսը՝ պասիվ: Նրանք համարժեք են և գտնում են մշտական փոխազդեցութեան մեջ»¹¹: Այս առումով Ե. Ֆրանգյանի հատուկ քննադատությանն է արժանանում պատմական մատերիալիզմի տեսությունը, որի միակողմանիությամբ անհնար է բացատրել պատմահասարակական կյանքի բարդ երևույթներն ու դրանց զարգացումը. «Տնտեսութիւնը հասարակութեան մի կողմն է միայն, պատմա-հասարակական կեանքի մի երևույթ: Հետևապէս՝ կեանքի մի կողմով, տնտե-

9 Ֆրանգեան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը, էջ 92:

10 Ֆրանգեան Ե., նույն տեղում, էջ 138:

11 Ֆրանգեան Ե., Հասարակագիտական էտիդներ. Հ.Յ. Գաշնակցութեան սօցիալ-փիլիսոփայական աշխարհայեացողութեան հիմնատրման շուրջը, Բագու, 1917, էջ 104:

սագիտութեան սկզբունքներով բացատրել մարդկային ողջ պատմա-հասարակական կեանքը, քաղաքական և մշակութային զարգացումը, նշանակում է հենց սկզբից դատապարտուել անյաջողութեան և ընկնել սխալանքի մէջ»¹²:

Ընդգծելով ՀՅԴ աշխարհայեցողության համադրական բնույթը՝ պատմական ռեալիզմը չի անտեսում այն փաստը, որ պատմական տարբեր դարաշրջաններում որոշիչ կարող են լինել տարբեր ազդակներ, գործոններ և տարրեր: Ուստի անհրաժեշտ է «Ամէն մի պատմական և հասարակական երևոյթի լուսաբանութեան մօտենալիս վերցնել իրական կեանքը իր ամբողջութեան մէջ, ճշդէլ այդ բազմազան գործօններից իւրաքանչիւրի յատուկ դերը – երկրի մշակոյթի, ազգային և պատմական առանձնայատկութիւնների, միջավայրի, կրօնի, տնտեսական շահերի, և այլնի»¹³: Դրանց միջև, Ե. Ֆրանգյանի կարծիքով, գոյություն ունեն ոչ թե պատճառահետևանքային, այլ գործառութային հարաբերություններ:

Ե. Ֆրանգյանի փիլիսոփայական համակարգի մեջ առանձնակի կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես պատմական ռեալիզմը՝ որպես ՀՅԴ աշխարհայացքի տեսական առանցք, քանի որ կուսակցությունը պետականության իդեալի իրականացումը դիտում էր որպես հավաքական գործ, որում այս կամ այն կերպ իրենց ներդրումը պիտի ունենան ժողովրդի բոլոր ներկայացուցիչները, հասարակության բոլոր խմբերը:

Պատմական ռեալիզմի դիրքերից է Ե. Ֆրանգյանը քննարկում նաև պատմական գործընթացների շարժիչ ուժերի հարցը¹⁴: Ըստ գաղափարների փոխլրացման սկզբունքի՝ նա ընդունում է թե՛ զանգվածների, թե՛ անհատների դերը պատմության մէջ¹⁵: Նրա կարծիքով՝ ծայրահեղ տեսակետները բացարձակացնում են կամ անձնական նախաձեռնությունը, կամ պատմության անդեմ (անանձնական) բնույթը: Իրականում չի կարող լինել պատմական գործի ու զանգվածի բացարձակ հակադրություն, կարծում է Ե. Ֆրանգյանը, քանի որ վերջին հաշվով, մի կողմից՝ միշտ ծագում է մարդկանց որոշակի աստիճանակարգություն, որոնք ավելի մոտ են կանգնած գործիչին և գործում են նրա գաղափարների (կամքի, ծրագրերի և այլն) իրականացման ուղղությամբ, իսկ մյուս կողմից՝ նրա վրա ազդեցություն են գործում: Բայց, այնուամենայնիվ, հաճախակի են այն դեպքերը, երբ անհատն ու զանգվածը բաժանված են բավականին որոշակի որակական պատնէշով, մասնավորապես երբեմն անհատը սկսում է գործել միայնակ, և միայն հետո ծագում է նրա հետնորդների ու համախոհների աստիճանակարգությունը: Պարզապես նշանավոր անհատները, թեկուզ ինտուիտիվ

12 Ֆրանգեան Ե., Մարքսիզմի վարդապետութիւնը, «Նավասարդ» գրական, մշակութային, ազգային ամսագիր, Գլենդել, 1990, N 97, էջ 18:

13 Ֆրանգեան Ե., Քրիստափոր Միքայէլեան. նրա կեանքը և աշխարհայեցողութիւնը, Հ.Յ.Դաշնակցութեան «ԿԼՅԾԵԼ» մատենաշար, N 1, 1989, էջ 66:

14 Տե՛ս Օհանյան Ս., Երվանդ Ֆրանգյանը և պատմության ընթացքի վրա անհատի ունեցած ազդեցության գնահատման հարցը, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., 2014, N 1, էջ 156-167; Օգանյան Ս., Философ дела и идеи: Ерванд Франгян о Николае Михайловском, «Русская философия истории: материалы Международной научной школы для молодых ученых», Белгород, 2014, с. 179-185; Օգանյան Ս., Николай Михайловский. Великий философ-социолог, Материалы международной философской конференции «Русский логос: горизонты осмысления», Санкт-Петербург, 25-28 сентября 2017 г.. В 2-х т. Т. 1, с. 164-171:

15 Այդ մասին տե՛ս Ֆրանգեան Ե., Պատմափիլիսոփայութիւն, «Միտք» զուտ գիտական և փիլիսոփայական ժողովածու, խմբ. և հրատ. Ֆրանգեան Ե., Եր., 1910, էջ 77-78:

կերպով, զգում, ըմբռնում են պատմական անհրաժեշտությունը: Նրանք սոսկ անհատներ չեն, այլ մտավոր ու բարոյական գիտակցության կրողներ, որոնք առանձնանում են հետևյալ հատկություններով.

ա) նրանց կատարած գործերը ոչ թե տեղական, այլ ընդհանուր նշանակություն են ունենում,

բ) նրանց ազդեցության շրջանակը և գործունեության ոլորտը սահմանափակված չէ,

գ) նրանք տեղ են գրավում քաղաքակրթության պատմության մեջ,

դ) նրանք քննադատաբար են վերաբերվում հասարակական շարժումներին, պատմական կյանքի երևույթներին:

Ինչպես նշվեց, Ե. Ֆրանգյանը չի անտեսում նաև զանգվածների նշանակությունը պատմական գործընթացներում: Հասարակական շարժումների, պատմական զարգացման մեջ զանգվածների դերն անտարակուսելի է: Զանգվածը ևս իր ցանկություններն է առաջադրում և դրանց համար պայքարում: Նա ևս ունի իր կամքը, միայն թե դա կոլեկտիվ կամք է: Միշտ չէ, որ անհատական կամքը հակադրվում է կոլեկտիվ կամքին: Ե. Ֆրանգյանի համար որպես նախադրյալներ ընդունվող կոլեկտիվ և անհատական կամքերն ավելի հաճախ միմյանց ոչ թե հակադրվում են, այլ լրացնում, ամբողջացնում: Երբեմն էլ անհատական կամքն ավելի ուժեղ է լինում և ուղղություն է տալիս ժողովրդական զանգվածներին: Միայն թե պատմության ընթացքի վրա անհատի և զանգվածի ազդեցություններն ունեն տարբերակիչ առանձնահատկություններ: Ժողովրդական զանգվածները, հսկայական ամբոխներն ազդում են պատմության ընթացքի վրա, բայց ոչ այնքան գիտակցաբար, որքան մեխանիկորեն, ինքնաբերաբար: Զանգվածային շարժումների մեջ չկա խորապես գիտակցված, պլանաչափ գործունեություն: Պետությունն ու հասարակությունը կազմված են մարդկանցից, սակայն վերջիններիս մասնակցությունը պետական ու հասարակական կյանքին պակաս ստեղծագործական է, քան քննադատաբար մտածող անհատների աշխատանքը, որոնց հաճախ անվանում են նաև «ժամանակի գիտակցություն»:

Ամբոխի վարքը, համոզված է Ե. Ֆրանգյանը, սովորաբար որոշվում է գրավիչ տրամադրությունների ներգործությամբ և ենթակա է առաջնորդի ուժեղ ազդեցությանը. որպես առաջնորդ հանդես է գալիս այն մարդը, որը մյուսներից ավելի արագ ու լավ է որսում ամբոխի տրամադրությունը, կարգին չարտասանված նրա ձգտումները, մղումներն ու շարժառիթները կամ ընդունակ է ամբոխին հասցնելու իրեն ցանկալի վիճակի: Ամբոխն առանց առաջնորդի ոչինչ չի կարող անել: Ժողովուրդները չափազանց մեծ դեր են խաղում խոշոր, հեղաշրջող գաղափարների տարածման գործում, բայց այդ գաղափարների ստեղծմանը նրանց մասնակցությունն անհամեմատ փոքր ու աննշան է անհատի ստեղծագործական ուժի հանդեպ. այստեղ զանգվածներն ավելի շատ օգնողներ են. «Մասսան կարող է միայն երեք դէպքում ուշադրութեան արժանանալ. առաջին՝ անորոշ կօպիա մեծ մարդկանց՝ վատ թղթի վրա. երկրորդ, նրանց համար որպես խոչընդոտ և երրորդ, մեծերի ձեռքին որպես զէնք»¹⁶:

16 Ֆրանգեան Ե., Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը (նրա մահուան 10-եակի առիթով. 1900-1910), Թիֆլիս, 1910, էջ 73:

Ե. Ֆրանգյանի կարծիքով՝ պատմական զարգացումն ունի և՛ ժողովրդական զանգվածների, և՛ անհատների կարիքը: Գաղափարներն առաջանում են անհատական մակարդակում, տարածվում՝ կոլեկտիվ կերպով: Անհատները կատարելապես ազատ չեն ամենից առաջ այն պատճառով, որ նրանք միջավայրից և զանգվածներից են ստանում նյութ իրենց գործողությունների համար: Անհատների և զանգվածների միջև գոյություն ունի հաստատուն փոխազդեցություն՝ փոխայանանավորող և փոխլրացնող: Անհատներն են ձևակերպում, ի մի բերում ժողովրդական զանգվածների ցրված մտքերը, անորոշ ու չձևավորված տրամադրությունները և այդ առումով ավելի հեշտությամբ են կարողանում զանգվածներին որոշ ուղղությամբ առաջ մղել. «Մեծ մարդկանց, քննադատօրէն մտածող անհատների ոյժը կայանում է հէնց նրանում, որ նրանք կարողանում են պատմական մօմենտները, քաղաքական-հասարակական շարժումները ձևաորել, ձևակերպել և իրենց ակտիւ մասնակցութեամբ այդ շարժումներին համապատասխան ընթացք և մղում տալ»¹⁷: Պատմության ողջ ընթացքը վկայում է, որ ոչ մի սոցիալական ուժ, ոչ մի խումբ պատմության մեջ չի հասել գերիշխանության, եթե նա առաջ չի քաշել իր քաղաքական առաջնորդներին, իր առաջավոր ներկայացուցիչներին, որոնք ընդունակ են կազմակերպել շարժումը և ղեկավարել այն:

Միաժամանակ Ե. Ֆրանգյանը չի անտեսում նաև այն բնական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների նշանակությունը, որոնցում ապրում է անհատը: Պատմական կազմավորիչ գործընթացում վճռորոշ դեր են կատարում և՛ նյութական-տնտեսական, և՛ մշակութային-մտավոր ու բարոյահոգեբանական գործոնները:

Անհատի գործունեության հետ կապված՝ Ե. Ֆրանգյանը քննարկում է նաև կամքի ազատության հիմնահարցը: Ե. Ֆրանգյանը չի ընդունում ո՛չ ինդետերմինիստների կարծիքը կամքի բացարձակ ազատության մասին՝ անկախ հասարակական կարգերից ու միջավայրի պայմաններից, ո՛չ էլ դետերմինիզմի այն տեսակետը, թե անհատի գործողությունները որոշվում են հասարակական կարգերով՝ որպէս դրանց արդյունք: Ճշմարտությունն այդ երկուսի համադրությունն է: «Կամքը, անհատական կամեցողութիւնը չի ներկայանում սոսկ հետևանք, այլ նաև պատճառ: Մարդը իր կամեցողութեամբ մտնում է իրերի պատճառականութեան կապակցութեան մէջ»¹⁸: Այսպիսով, ըստ Ե. Ֆրանգյանի՝ մի կողմից՝ հասարակական ու բնական պայմանները, մյուս կողմից՝ կամքով ու գիտակցությամբ օժտված անհատները գտնվում են փոխազդեցության մեջ, այսինքն՝ բացառիկ նշանակություն չի վերագրվում ո՛չ միջավայրին, ո՛չ անհատներին առանձին-առանձին վերցրած. յուրաքանչյուր մարդ իր ժամանակաշրջանի ծնունդն է, յուրաքանչյուր բացառիկ անհատ՝ իր բացառիկ դարաշրջանի ծնունդը:

Ե. Ֆրանգյանի փիլիսոփայության մյուս կարևոր բաղադրիչը ազգային-փիլիսոփայական հայեցակարգն է, որը՝ որպէս հայ ազգային հոգեկերտվածքի, հայ ազգային նկարագրի վերլուծություն, ազգային ինքնաձանաչման հարցը կապում է հայ ժողովրդի կրավորական կեցվածքի ու ազգային ձա-

17 Ֆրանգեան Ե., Հասարակագիտական էտիդներ, էջ 77:

18 Ֆրանգեան Ե., Պատմափիլիսոփայություն. գիտական-փիլիսոփայական էտիդ, Եր., 1909, էջ 56:

խողումների հետևանքով ձևավորված պարտվողական հոգեբանության հաղթահարման, միասնական ազգային ամբողջության ստեղծման խնդիրների հետ¹⁹: Ե. Ֆրանգյանը, ինչպես և XX դարասկզբի մյուս փիլիսոփաները հայ ազգային հոգեկերտվածքի, հայ ազգային նկարագրի ձևավորման վրա ազդող գործոնները բաժանում է երկու խմբի՝ օբյեկտիվ-պատմական և սուբյեկտիվ-հոգեբանական (ներագգային): **Օբյեկտիվ-պատմական** գործոններից են սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները, իսկ **սուբյեկտիվ-հոգեբանական** գործոնները պայմանավորված են հայ ժողովրդի ազգային առանձնահատկություններով:

Օբյեկտիվ-պատմական գործոնների ձևավորման մեջ Ե. Ֆրանգյանը մեծ դերակատարություն է վերագրում նվաճողների բարբարոսական-բռնապետական վարչակարգերին, որոնց հայ ժողովուրդը դարեր շարունակ ստիպված է եղել հպատակվել ու ենթարկվել: Այդ հանգամանքը «սերնդէ-սերունդ ... իր ակերիչ, թունավորող ազդեցութիւնն է դրել հայ ժողովրդի օրգանիզմի վրայ, այլանդակել նրա պատկերը, առաջ բերել այս կամ այն չափի բարոյական այլասեռում»²⁰, որը, Ե. Ֆրանգյանը, հետևելով Քրիստափոր Միքայելյանին, անվանում է «պատմական չարիք»: Նրա կարծիքով՝ քանի որ հայի ազգային բնավորության և վարքագծի թերությունները (անմիաբանությունը, պառակտվածությունը, սեփական մշակութային արժեքների նկատմամբ անտարբերությունը, օտարամոլությունը, անհանդուրժողականությունը և այլն) ձևավորվել են դարերի ընթացքում, ապա ժամանակի ընթացքում տիրող պայմանների փոփոխության հետ մեկտեղ երբևէ վերանալու են:

Այսպիսով, XX դարասկզբի հայ ականավոր մտավորական, փիլիսոփայության դոկտոր Երվանդ Ֆրանգյանը (1878-1928), հետապնդելով ՀՅԴ գաղափարական ակունքների ու հասարակական-քաղաքական դավանանքի բացահայտման, հայ ազգային կեցության մեջ այդ կուսակցության ունեցած դերակատարության ուսումնասիրության նպատակները, դիմել է համաշխարհային փիլիսոփայության կարևորագույն ուղղություններից մեկին՝ «երկրորդ պոզիտիվիզմին»: Նրա կարծիքով՝ այս ուղղության հիմնադիրներ Մախի և Ավենարիուսի գաղափարները լավագույնս են արտահայտում ՀՅԴ աշնակցության աշխարհայեցողության համադրական բնույթը: Ե. Ֆրանգյանի համադրական մոնիզմի կամ քննադատական-իրապաշտ փիլիսոփայության հիմքում ընկած է գաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը, որը դրսևորվում է իմացաբանության, հոգեբանության, սոցիալական փիլիսոփայության և պատմափիլիսոփայության մեջ: Սակայն Ե. Ֆրանգյանի փիլիսոփայական համակարգի մեջ առանձնակի կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես պատմական ռեալիզմը՝ որպես ՀՅԴ աշխարհայացքի տեսական առանցք, ըստ որի՝ պատմական գործընթացը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ իրատեսորեն գնահատելով այդ գործընթացին մասնակցող յուրաքանչյուր տարրի և ուժի տեղն ու դերը:

19 Տե՛ս **Օհանյան Ս.**, Հայ ազգային հոգեկերտվածքի վերլուծությունը Երվանդ Ֆրանգյանի «Առոպատական» երկում, «Հայոց ինքնության հարցեր»: Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2015, պրակ 3, էջ 99-112: **Օհանյան Ս.**, Ազգային նկարագրի հիմնախնդիրները XX դարասկզբի հայ փիլիսոփայության մեջ, «Ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը: Հոդվածների ժողովածու», Եր., 2016, էջ 136-147:

20 **Ֆրանգյան Ե.**, Քրիստափոր Միքայելյան. նրա կեանքը և աշխարհայեցողությունը, Բագու, 1917, էջ 87-88:

Սոֆյա Ն. Օհանյան – գիտական մի շարք հոդվածների, վերլուծական հրապարակումների և ուսումնասովանողական ձեռնարկի հեղինակ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 20-րդ դարասկզբի հայ փիլիսոփայության պատմության, համաշխարհային և հայ մշակույթի պատմության հիմնահարցերը:

Summary

THE COMPARATIVE MONISM OF YERVAND FRANGYAN IN THE CONTEXT OF EARLY XX CENTURY CHALLENGES OF ARMENIAN LIFESTYLE

On the anniversary of 140 of birth and 90 of his death

Sophia N. Ohanyan

Key words – the history of Armenian philosophy; Positivism; Synthetic Monism; the principle of mutual addition of ideas; Historical Realism.

Doctor of philosophy, eminent Armenian thinker of the early 20th century Ervand Frangyan (1878–1928) aiming to analyze the ARF worldview, disclose the ideological sources of the stated worldview, study the role of the party in social-political dogmas and in the Armenian national existence turns to the second positivism, that is, to one of the most important schools of philosophy. In his view the ideas of the founders of the school Mach and Avenarius best express the synthetic character of ARF worldview. The principle of mutual addition of ideas underlies Frangyan's Synthetic Monism or critical-realistic philosophy, which is demonstrated in epistemology, psychology, social and historical philosophy. Nevertheless, historical realism as a theoretical basis of ARF worldview is of particular importance in Frangyan's philosophical system. According to historical realism, historical process should be considered as an entity with a realistic assessment of the place and role of each party involved in this process.

Резюме

СИНТЕТИЧЕСКИЙ МОНИЗМ ЕРВАНДА ФРАНГЯНА В КОНТЕКСТЕ ВЫЗОВОВ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО БЫТИЯ НАЧАЛА XX ВЕКА

Софья Н. Оганян

Ключевые слова – история армянской философии, позитивизм, синтетический монизм, принцип взаимодополнения идей, исторический реализм.

Выдающийся армянский мыслитель начала XX века, доктор философии Ерванд Франгян (1878–1928) в ходе анализа идейных истоков и социально-

политической идеологии партии АРФ Дашнакцутюн и роли этой партии в армянском национальном бытии обращается к одному из важнейших направлений всемирной философии – «второму позитивизму». По его мнению, идеи основоположников этого направления Маха и Авенариуса наилучшим образом выражают синтетический характер мировоззрения АРФ Дашнакцутюн. В основе синтетического монизма или критическо-реалистической философии Е. Франгяна лежит принцип взаимодополнения идей, который отображается в гносеологии, психологии, социальной философии и философии истории. Но в философской системе Е. Франгяна особо важное место занимает именно исторический реализм как теоретический стержень мировоззрения АРФ Дашнакцутюн; согласно этой теории, исторический процесс необходимо рассматривать в его целостности, реалистично оценивая место и роль каждого элемента, каждой силы, участвующей в этом процессе.

REFERENCES

1. **Khudinyan G.**, ԿՄ Դաշնակցութեան զոգևորումը (հայտնական լուրեր 1895 թվականի վերջից), Եր., 2006. **(in Armenian)**
2. **Frangyan E.**, Pilisopayakan namakner, «Gorc» oratert, Baqu, 1908, N 19. **(in Armenian)**
3. **Frangyan E.**, Mer pilisopayakan ashkharhayecqy. Irapasht pilisopayutyun. H. Y. Dashnakutean pilisopayakan ashkharhayacqci himnavorman pordz, Pariz, 1929. **(in Armenian)**
4. **Frangyan E.**, Hasarakagitakan etyudner, H.Y. Dashnakutean social-pilisopayakan ashkharhayecoxutean himnavorman shurjy, Bagu, 1917. **(in Armenian)**
5. **Frangyan E.**, Marqsizmi vardapetutyuny, «Navasard» grakan, mshakutayin, azgayin amsagir, Glendel, 1990. **(in Armenian)**
6. **Frangyan E.**, Qristapor Miqayelean. nra keanqy yev ashkharhahayecoxutyuny, H.Y. Dashnakutean «KAYCER» matenashar, N 1, 1989. **(in Armenian)**
7. **Frangyan E.**, Patmapilisopayutyun, «Mitq» zut gitakan yev pilisopayakan zhoghovacu, khmb. yev hrat. Frangyan E., Er., 1910. **(in Armenian)**
8. **Ohanyan S.**, Pilisopayakan-mardabanakan harcery XX daraskzbi hay pilisopayutyun mej, «Banber Hayastani petakan tntesagitakan hamalsarani», Er., 2007, N2. **(in Armenian)**
9. **Ohanyan S.**, Ervand Franyany yev patmutyan yntacqi vra anhati unecac azdecutyun gnahatman harcyy, «Banber Hayastani petakan tntesagitakan hamalsarani», Er., 2014, N 1. **(in Armenian)**
10. **Oganjan S.**, Filosof dela i idej: Ervand Frangjan o Nikolaje Mixajlovskom, “Russkaja filosofija istorii: materialy Mezhdunarodnoj nauchnoj shkoly dlya molodyx uchenyx”, Belgorod, 2014. **(in Russian)**
11. **Oganjan S.**, Nikolaj Mixajlovskij. Velikij filosof-sociolog, Materialy mezhdunarodnoj filosofskoj konferencii “Russkij logos: gorizonty osmysleniya”, Sankt-Peterburg, 25–28 sentjabrja 2017g., V 2-x t., T. 1. **(in Russian)**
12. **Ohanyan S.**, Ervand Frangyany pilisopayutyun eutyun yev nshanakutyann masin, «Banber Erevani hamalsarani», Er., 2008, N2. **(in Armenian)**